5-6 դասարան

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1) Ո՞ւր չես կարող գնալ:

Ա) գործարան
Բ) հարցարան
Գ) դասարան
Դ) գրադարան

2) Երկնքում ճախրում էին թիթեռը, ճնճղուկը, ծիծեռնակը, մոծակը, մեղուն, ագռավը, բզեզն ու արոսը: Ընդամենը քանի՞ թռչուն էր թռչում երկնքով:

Ա) 3
Բ) 4
Գ) 5
Դ) 6

3) Տարբերակներից ո՞րն է ավելորդ:

Ա) կրկին
Բ) վերստին
Գ) դարձյալ
Դ) ստորին

4) Երկնագույն ու նարնջագույն հագուստներով աղջիկները բազմագույն ծաղիկների մեջ գեղեցկագույն պատկեր էին ստեղծել: Տրված բառերից ո՞րն է տարբեր մյուսներից:

Ա) երկնագույն
Բ) նարնջագույն
Գ) բազմագույն
Դ) գեղեցկագույն

Վերարտադրումը միայն "Քոնթեսոս ԼՏԴ"-ի թույլտվությամբ

5) Տարբերակներից ո՞րն է «օտար»:

Ա) հոմանիշ
Բ) նույնանիշ
Գ) հականիշ
Դ) համանիշ

6) Տարբերակներից ո՞րն է կապակցում գերան և գույն բառերը՝ լինելով մեկի հոմանիշը, մյուսի՝ գրաշրջումը (այսինքն՝ կազմված է նրա բոլոր տառերով):

Ա) գարուն
Բ) գայլ
Գ) երանգ
Դ) բույն

7) Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կսպանի, ձեռքեր չունի,
Հավկիթ ունի, փետուր չունի,
Շապիկ ունի, որ կար չունի: (Ժողովրդական հանելուկ)

Ա) կրակ
Բ) քամի
Գ) օդապարիկ
Դ) օձ

Վերահրապարակումը միայն Էնդեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

8) Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառազույգ(եր)ի բառերը կհայտնվեն միևնույն բանակում:

1) բիրտ - քնքուշ
2) երկչոտ - համարձակ
3) թավ - նոսր
4) բուժել - առողջացնել
5) գթալ - կարեկցել

Ա) 1; 2
Բ) 4; 5
Գ) 3
Դ) 1; 5

9) «Նոր տարին կենդանաբանական այգում» պատմվածքում հիշատակվում է մի ոզնի, որը «շրջապատի բոլոր խանութները գիտի իր հարյուր տասնհինգ ասեղների նման»: Իսկ ինչպե՞ս են նման դեպքերում ասում մարդկանց մասին՝ գիտի իր...

Ա) ... երեսուներկու ատամի նման
Բ) ... հինգ մատի նման
Գ) ... երկու ոտքի նման
Դ) ... հարյուր հազար չորս հարյուր մազի նման

10) Ո՞ր տարբերակի բառազույգի բառերն են իրարից տարբերվում հնչյունական կազմով:

Ա) Նարեկ - Կարեն
Բ) մտրակ - մկրատ
Գ) մարզանք - զարմանք
Դ) կողով – ողորկ

Վերարտադրումը միայն "Քոնգրես Լաբ"-ի թույլտվությամբ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11) Ո՞ր հեքիաթային հերոսի անունն է գաղտնագրվել:

Մենայբնուչաուկեն

Ա) Մարդուկ-Ջարդուկ
Բ) Մոխրոտիկ
Գ) Մանչուկ
Դ) Մատնաչափիկ

12) Ո՞ր կենդանիների խմբի անվանումը կստանաս, եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հինգական անգամ:

ե	ն	ր	կ	խ	ի
ի	ր	հ	խ	ե	ր
ռ	խ	ն	ի	մ	ե
ր	ն	ի	ր	ե	ի
խ	ե	ն	խ	ա	ն

Ա) գայլերի
Բ) այծերի
Գ) խոզերի
Դ) առյուծների

13) Պատասխանի տարբերակների բառազույգերից մեկը որոշակի օրինաչափությամբ միահյուսվել-դարձել է նկարում բերված գրվածքը: Ո՞ր բառազույգն է դա:

Աչշիացկուեսրուտ

Ա) Արտաշես — Արտաշատ
Բ) աշակերտ — ուսուցիչ
Գ) չորանոց — աշտարակ
Դ) աշխատանք — տարեկից

Վերարտադրումը միայն "Քրեստոմաթիա"-ի թույլտվությամբ

14) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա) հումք
Բ) քարհանք
Գ) համրանք
Դ) հերքում

15) Ո՞ր հայ արքան է թաքնվել հայկական քաղաքների շարքում որոշակի օրինաչափությամբ:

Արարատ, Վանաձոր, Բերդ, Ախթալա, Արտաշատ

Ա)Մենուա
Բ) Արշակ
Գ) Տրդատ
Դ) Գագիկ

16) Գտիր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա)
Բ)
Գ)
Դ)

```
  ԿՐԻԱ
+
  ԿՐԻԱ
  ԱՐԱԳ
```

Ա. $\begin{array}{r} 2975 \\ +\ 2975 \\ \hline 5950 \end{array}$ Բ. $\begin{array}{r} 1864 \\ +\ 1864 \\ \hline 3928 \end{array}$ Գ. $\begin{array}{r} 4197 \\ +\ 4197 \\ \hline 8394 \end{array}$ Դ. $\begin{array}{r} 3086 \\ +\ 3086 \\ \hline 6172 \end{array}$

Վերահրապարակումը միայն "Քոնթենտս Լաբ"-ի թույլտվությամբ

17) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

ՆՆ Ը –

Ա) ատամը կտրել
Բ) գայլի ախորժակ
Գ) ատամները հաշվել
Դ) ատամները հանած գայլ

18) Ո՞ր թվազույգն է թաքցրել մեղվիկը:

արև — 3/4
ոզնի — 4/5
կայտառ — 6/6
գլխարկ — 6/7
աշխարհ —

Ա) 5/4
Բ) 4/6
Գ) 6/5
Դ) 6/6

19) Թավշայնություն բառից կրկնվող տառերը հանելուց հետո մնացած տառերին ո՞ր տարբերակի ձայնավորն ավելացնենք, որ կարդանք կտավատի «ընկերոջը»:

Ա) ա
Բ) ի
Գ) ու
Դ) ո

վերարտադրումը միայն "Քոնթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

20) Մեղվիկը թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

մեդսանդիպաղրիբոց - մեսանդիաղիբ =

Ա) մարդիկ
Բ) հոգոց
Գ) անդամ
Դ) դպրոց

Վերահրապարակումը միայն "Քոնթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21) Ի՞նչ է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

մեղր (Ա), գաթա (Բ), նուռ (Ա), մեղու (Դ),
դաշտ (Գ), առվակ (Դ), ոսկի (Գ)

Ա) միրգ
Բ) ծառ
Գ) ծաղիկ
Դ) կենդանի

22) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) ուրեմն
Բ) անուշեղեն
Գ) թեքել են
Դ) անուշ լինի

23) Եթե բոլոր ամսանունները դասավորենք այբբենական կարգով, ապա տարվա առաջին ամիսն այդ ցանկում կհայտնվի վեցերորդ տեղում: Ո՞ր ամիսը կգլխավորի այբբենական այդ ցանկը:

Ա) մարտ
Բ) դեկտեմբեր
Գ) ապրիլ
Դ) հուլիս

Վերահրատարակումը միայն "Քոնթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

24) Գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները ստեղծել են «կոտորակագիր» կոչվող ծածկագիրը, որում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացվում է որպես կետերից ու մի գծիկից բաղկացած պատկեր: Այդ տառերից երեքը երևում են նկար 1-ում: Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե ինչ բառ է ծածկագրված նկար 2-ում:

Նկար 1



Նկար 2



Ա) երազանք
Բ) ընտանիք
Գ) հայրենիք
Դ) ուսուցչուհի

25) Ո՞ր տարբերակը չես գտնի աղյուսակումս:

Ա) զենք բաժանող մարդ
Բ) ջուր բաժանող մարդ
Գ) հեռու տեղից եկած մարդ
Դ) զարմացած մարդ



Վերարտադրումը միայն "Բ, [illegible] ՀԱԲ"-ի թույլտվությամբ

26) Բաց թողնված տառերը լրացնելով՝ Գոհարը մի հետաքրքիր օրինաչափություն նկատեց և ուսուցչուհու առաջարկած տարբերակներից ընտրեց ճիշտը: Ո՞ր տարբերակն ընտրեց Գոհարը:

Դրսում ահա__ին շո__ էր: Պատարա__ի ելևէջները տարածվում էին Մայր տաճարից : Պար__ևը ունկնդրում էր՝ հենված պատշ__ամբի ճաղերին: Ներքևում լսվում էր զու__ված- զարդարված աղջիկների անհո__ քրքիջը:

Ա) 2+5
Բ) 3+4
Գ) 4+3
Դ) 6+1

27) Արմինեն արդեն կարողանում է գումարել և հանել, բայց դեռևս չի անցել կոտորակները: Մաթեմատիկական այս խնդիրներից ո՞րը նա կկարողանա լուծել:

Ա) Տղաները կազմում են դասարանի երեք հինգերորդը, իսկ նրանց մեկ յոթերորդը գերազանցիկներ են: Քանի՞ աշակերտ կա այդ դասարանում:

Բ) Դպրոցում կա երեք հինգերորդ դասարան: 5«ա»-ում սովորում է 25 աշակերտ, ինչը 4-ով պակաս է 5«բ»-ից և 6-ով ավելի 5«գ»-ից: Ընդամենը քանի՞ հինգերորդդասարանցի կա այդ դպրոցում:

Գ) Դասարանի աշակերտներից ինը հաճախում է երաժշտության: Նրանք կազմում են դասարանի երեք ութերորդը: Քանի՞ աշակերտ է հաճախում երաժշտության:

Դ) Արմինեն խնդիրներից ոչ մեկը չի կարողանա լուծել:

Վերահրատարակումը Միայն Կոնկուրսային ԼԱԲ"-ի թույլտվությամբ

29) Ի՞նչ նախադասություն է ծածկագրվել նկարելուկով:

Ա) Մենք կանք, մենք ինն ենք:
Բ) Մեկն ու երկուսը կարմիր քարեր են:
Գ) Սպիտակ մկան աչքերը կարմիր են:
Դ) Մտքին կանաչներն ու կարմիրներն են:

30) Ահա երաժշտական նոտաների սովորական հերթականությունը՝ *դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի*: Նոտաներից քանի՞սը կմնան իրենց տեղերում, եթե դրանք դասավորենք այբբենական կարգով:

Ա) ոչ մեկը
Բ) 1
Գ) 2
Դ) 3

Վերահրապարակումը միայն "Քոչարյան Լաբ"-ի թույլտվությամբ